RÉPUBLIQUE FRANÇAISE
Liberté
Égalité
Fraternité

ARMÉNIEN

ՀԱՅԵՐԵՆ

Հարցում՝ օգնության ծառայություններից օգտվող անձանց շրջանակում

Ձեր անձնական տվյալները

Այս հարցման պատասխանները պաշտպանված են վիճակագրության գաղնիքով և հասցեագրվում են տնտեսական հետազոտությունների և վիճակագրության ազգային Ինստիտուտին (INSEE) և Հետազոտության, Ուսումնասիրության, Գնահատման ու Վիճակագրության Վարչությանը (DREES): Պատասխանները կպահպանվեն դրանք ստանալուց հետո՝ տասը տարվա ընթացքում, հարցման նպատակների համար: Դրանք կարխիվացվեն այդ ժամանակահատվածից հետո: Դրանց օգտագործումն ու հասանելիությունը խստորեն կվերահսկվեն և կկիրառվեն միայն վիճակագրական տվյալների մշակման, ինչպես նաև պատմական ու գիտական հետազոտությունների աշխատանքների նպատակով:

Սույն հարցման պարագայում կիրառվում են Տվյալների պաշտպանության՝ 2016 թ-ի ապրիլի 17-ի N°2016/679 գլխավոր կանոնադրությունը (RGPD), ինչպես նաև Թվայնացման ու ազատությունների մասին 1978 թ-ի հունվարի 6-ի N°78-17 օրենքը:

Նույնականացման տվյալները (ազգանունը, անունն ու կոնտակտային տվյալները) տրամադրվում են միայն INSEE-ին, DREES-ին և Ֆրանսիայի Գլխավոր Արխիվին՝ Ազգային արժեքների մասին օրենսգրքի L.212-4 հոդվածի համաձայն. դրանք կպահպանվեն 2 տարվա ընթացքում:

Տվյալների պահպանման ողջ ընթացքում հարցման մասնակիցները իրենց վերաբերող տվյալներին ծանոթանալու, դրանցում ուղղումներ կատարելու և դրանց մշակումը սահմանափակելու իրավունք ունեն: Այդ իրավունքից օգտվելու համար իրենք պետք է դիմեն INSEE-ին (contact-rgpd@insee.fr) կամ Էկոնոմիկայի, Ֆինանսների և Արդյունաբերության ու Թվայնացման Նախարարության կողմից տվյալների պաշտպանության լիազորված անձին՝ Բերսի (139 Rue de Bercy, 75 012 Paris): Դուք իրավունք ունեք նաև բողոքարկում ներկայացնել CNIL (թվայնացման ու ազատությունների Ազգային Հանձնաժողով) (www.cnil.fr):

Insee Mesurer pour comprendre

Drees

STATISTIQUE PUBLIQUE

BAC DE TRI